

«Մսկերի կենսաբանության և կենսատեխնոլոգիայի» լաբորատորիա

Մսկերի կենսաբանության և կենսատեխնոլոգիայի խումբը (ՄԿԿԽ) հիմնադրվել է 1993թ. ԵՊՀ-ի կենսաբանության ֆակուլտետում: 2005թ. այն վերաձևավորվել է Մսկերի կենսաբանության և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի (ՄԿԿԼ): ՄԿԿԼ-ի գիտական հետաքրքրությունները հիմնականում ուղղված են դեղասնկերի՝ որպես կենսաակտիվ միացությունների և ֆերմենտների բնական աղբյուրի կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրմանը և դրանց կենսատեխնոլոգիական պոտենցիալի բացահայտմանը սնկային ծագման կենսատեխնոլոգիաների ստանալու նպատակով:

ՄԿԿԼ-ի Մսկային կուլտուրաների հավաքածուն ներկայացված է մակրոսկոպիկ և միկրոսկոպիկ սնկերի 148 տեսակի 523 շտամներով: Մակրոսկոպիկ սնկերի հավաքածուն ներառում է 97 տեսակի 431 շտամներ, այդ թվում գենետիկորեն որոշված 32 տեսակի 144 շտամներ: Միկրոսկոպիկ սնկերի հավաքածուն կազմված է 51 տեսակի 92 շտամներից, որից 12 տեսակի 42 շտամները պատկանում են կերատինոֆիլ սնկերի խմբին:

Մսկային կուլտուրաների մոլեկուլային կարգաբանության և ֆիլոգենիայի, միցելիումի մորֆոլոգիական, էկոլոգիական և դեղաբանական հատկությունների ուսումնասիրությունները իրականացվում են մի շարք եվրոպական և ամերիկյան համալսարանների հետ միջազգային ակտիվ գիտական համագործակցության շրջանակներում: Գերմանիայի Գյոթինգենի և Յենայի համալսարանների հետ համագործակցությունը հիմնականում ուղղված է կոպրինային սնկերի ժամանակակից կարգաբանության, ֆիլոգենիայի, կենսաբանական առանձնահատկությունների և կենսատեխնոլոգիական պոտենցիալի, ինչպես նաև դրանց դեղաբանական (հակաօքսիդանտային, հակասնկային, միտոգեն/ռեգեներացնող, հակաբակտերիալ, հակապրոտոզային, պրոտեոլիտիկ/ֆիբրինոլիտիկ) հատկությունների ուսումնասիրմանը: Կորիզային ռիբոսոմալ ԴՆԹ հատվածների վերլուծության մեթոդի կիրառմամբ տարբեր կլադների պատկանող երկու կոպրինային տեսակներ՝ *Coprinopsis strossmayeri* և *Coprinellus radians*, առաջին անգամ են նկարագրվել Հայաստանի տարածքում: Ռուսաստանի և Հայաստանի տարբեր էկոտոպերում *Ganoderma*, *Trametes*, *Fomes* և *Fomitopsis* ցեղերին պատկանող արեթասնկերի (*Basidiomycota*, *Polyporales*) բնական ռեսուրսների գենետիկական վերլուծությանը, դրանց կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրմանը և կենսատեխնոլոգիական պոտենցիալի գնահատմանը ուղղված ծրագիրը իրականացվում է Մոսկվայի Լոմոնոսովի անվ. Պետական համալսարանի, Ուրբինոյի և Բոլոնիայի համալսարանների (Իտալիա) հետ համատեղ: Մոլեկուլային կարգաբանության մեթոդների կիրառմամբ Հայաստանի տարածքում առաջին անգամ նկարագրվել է *Ganoderma adspersum* տեսակը: Մազանդարանի Գյուղատնտեսության և բնական ռեսուրսների հետազոտական կենտրոնի հետ համատեղ լաբորատորիայում նաև իրականացվում են հյուսիսային Իրանի տարածքում մակրոմիցետների կենսաբազմազանության, մասնավորապես դրանց դեղաբանական հատկությունների ուսումնասիրման ուղղությամբ աշխատանքներ: Հայաստանի պայուսակավոր (հիպոգիալ) և կերատինոֆիլ (գեոֆիլ) սնկերի կենսաբազմազանության ուսումնասիրությունները իրականացվում են Բոլոնիայի համալսարանի (Իտալիա) և Փարիզի Բնության պատմության ազգային թանգարանի (Ֆրանսիա) հետ համագործակցության շրջանակներում: Մոլեկուլային

կարգաբանության մեթոդներով որոշված 12 հիպոգիալ պայուսակավոր տեսակներից 10-ը, ներառյալ *Tuber rapaeodorum*, *Tuber rufum* և *Tuber scruposum*, առաջին անգամ են նկարագրվել Հայաստանի տարածքում: Առաջին անգամ Հայաստանի հողերից անջատվել է նաև մարդու և կենդանիների համար պոտենցիալ պաթոգեն կերատինոֆիլ սնկերի հավաքածուն:

ՄԿԿԼ-ի գիտական հետազոտությունները աջակցվել են մի շարք միջազգային կազմակերպությունների դրամաշնորհներով (ՆԱՏՕ, ԴԱԱԴ, ՀԱԳԿՖ, ԵԳՖ, ՄԳՏԿ, ՀՀՌՀ և այլն): Լաբորատորիայի աշխատանքներում ներգրավված են ասպիրանտներ, մագիստրատուրայի և բակալավրատուրայի ուսանողներ: